ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ Արարատ համայնքի բնակիչներ,

Մայիսի 28-ին ողջ հայ ժողովուրդը նշում է Առաջին հանրապետության տոնը: Շնորհավորում եմ բոլորիս մեզ համար պատմական նշանակություն ունեցող, պետականության համար այս կարևոր տոնի կապակցությամբ: Մայիսի 28-ը մեր ազգային ինքնակազմակերպման, միասնականության, հայրենասիրության, սեփական ուժերին հավատալու և ինքնավստահության խորհրդանիշն է:

1918թ. մեր պապերը շատ դժվար, թվում է՝ անելանելի պայմաններում, մեր ժողովրդի համար ճակատագրական պահին Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերում աննկարագրելի սխրանքով, ինքնազոհողությամբ ու հայրենանվիրումով նվաճեցին անկախ պետականություն ունենալու մեր իրավունքը: Թեև Հայաստանի առաջին հանրապետությունը կարճ կյանք ունեցավ, սակայն Հայաստանի առաջին հանրապետության հիմքի վրա հետագայում ձևավորվեցին այն նախադրյալները, որոնք 1991-ին բերեցին նոր անկախության ու նոր հաղթանակների: Այդ հենքի վրա այսօր ունենք երրորդ հանրապետությունը, որի լինելիության, հարատևության մեր բաժին ընթացքի ապահովման պատիվն ու պատասխանատվությունն ընկած է մեր բոլորիս ուսերին: Այսօր մեզանից յուրաքանչյուրի ամենօրյա աշխատանքի ելակետն ու շարժառիթը պետք է լինի հանրային բարիք ստեղծելը և մեր հայրենի հողն ու ջուրը սնելն ու փայփայելը , քանի որ չկա ու չպետք է լինի մեզ համար պետությունից և պետականությունից ավելի կարևոր ու ավելի թանկ բան:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլորիս այս գեղեցիկ տոնի՝ Առաջին հանրապետության օրվա առթիվ: Մաղթում եմ ամուր հավատ, միասնականություն, խաղաղություն և անամպ երկինք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ